ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2011 թ.

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մ.Մարտիրոսյանի զեկուցումը ՀՀ ԳԱԱ 2010 թվականի գիտական գործունեության արդյունքների մասին, արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվող գործունեությունը նպատակաուղղվել է ինչպես նոր գիտական արդյունքների ստացմանը, ՀՀ ԳԱԱ համակարգի ենթակառուցվածքների գործունեության աշխուժացմանը, այնպես էլ գիտության ոլորտում, հանրապետությունում իրականացվող բարեփոխումների շրջանակներում կատարվող գործառույթներում ՀՀ ԳԱԱ դերի և տեղի ամրապնդմանը:

Ստեղծվել է “ՀՀ ԳԱԱ-ի մասին” ՀՀ օրենքի նախագիծը, որը երկրորդ ընթերցմամբ քննարկվել է ՀՀ Ազգային Ժողովում:

Պատրաստվել է ՀՀ ԳԱԱ-ի 2011-2015 թթ. հիմնարար գիտական հետազոտությունների ծրագիր:

Որոշակի աշխուժություն է դիտվում ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական գործունեության մեջ, մենագրությունների և գիտական ամսագրերի հրատարակման ուղղությամբ:

ՀՀ ԳԱԱ բաժանմունքների տարեկան ժողովները արձանագրեցին, որ հիմնարար գիտությունների բնագավառում մեր գիտնականները ստացել են նոր արժեքավոր արդյունքներ:

ՀՀ ԳԱԱ բաժանմունքներում 2010 թվականին իրականացվել են լսումներ՝ ակադեմիական և ոչ ակադեմիական կազմակերպությունների մասնակցությամբ՝ նվիրված հանրապետության համար մեծ կարևորություն ունեցող գիտական խնդիրներին, ինչպես նաև գիտական արդյունքի ներդրմանը:

Ուշադրության է արժանի գիտության և կրթության ինտեգրման գաղափարի շրջանակներում, ՀՀ ԳԱԱ-ում իրականացվող մագիստրատական ուսուցումը և ուսուցման պայմանների բարելավումը:

Ժողովը գոհունակությամբ արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ-ն օրենքով իրեն վերապահված գործառույթների շրջանակներում, ակտիվ մասնակցություն է ունենում հանրապետության գիտության ոլորտի բարեփոխումների իրականացմանը:

ՀՀ ԳԱԱ-ն, որպես համակատարող, ՀՀ ԿԳՆ Գիության պետական կոմիտեի հետ համատեղ մասնակցել է գիտությանը և գիտական կադրերի պատրաստմանը վերաբերող օրենսդրական ակտերի պատրաստմանը և քննարկմանը:

Արձանագրելով հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ ԳԱԱ համակարգում տեղ գտած դրական տեղաշարժերը և նշանակալից ձեռքբերումները՝ ընդհանուր ժողովը միաժամանակ նշում է ՀՀ ԳԱԱ աշխատանքներում առկա որոշ բացթողումներն ու թերությունները և այն կարևորագույն խնդիրները, որոնց լուծումից է կախված համակարգի հետագա գործունեության արդյունավետությունը:

Իրավական դաշտի անկատարությունը շարունակում է դժվարություններ ստեղծել ակադեմիական գիտական կազմակերպությունների կողմից ստացված գիտական մշակումները արտադրություն հասցնելու հարցում: Այստեղ ոչ երկրորդական դեր է շարունակում խաղալ տնտեսվարող սուբեկտներից շատերի բացահայտ անտարբերությունը նորարարական առաջարկների նկատմամբ:

Չնայած ԳԱԱ նախագահության, բաժանմունքների ու ինստիտուտների ձեռնարկած քայլերին՝ ֆինանսական միջոցների սղության պատճառով դեռևս չի հաջողվել իրականացնել որոշ կազմակերպությունների վերանորոգման աշխատանքները:

Հույժ կարևոր է շարունակում մնալ գիտական ենթակառուցվածքների արդիականացման խնդիրը: Տասնյակ տարիներ գիտական կազմակերպությունները հնարավորություն չեն ունեցել ձեռք բերելու ժամանակակից գիտատեխնոլոգիական սարքավորումներ:

ՀՀ ԳԱԱ-ի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկի՝ երիտասարդ կադրերի արտահոսքը կանխելու ուղղությամբ մեծ նշանակություն կունենա ՀՀ Նախագահի կողմից հովանավուվող ծրագիրը, համաձայն որի մինչև 2013 թվականը 200-ից ավելի երիտասարդ գիտաշխատողներ հնարավորություն կունենան արտոնյալ գներով ձեռք բերել բնակարաններ այդ նպատակով կառուցվող շենքում:

Միևնույն ժամանակ, ժողովը արձանագրում է գիտաշխատողների ծայրահեղ ցածր աշխատավարձը, որը իր հերթին գիտական համակարգը երիտասարդ կադրելով համալրելու առջև ծառացած հիմնական խոչնդոտներից մեկն է: Սա այն կարևորագույն պատճառներից է, որն իր անդառնալի արդրադարձն է ունենում մեր գիտական համակարգի վրա, բերելով վերջինիս հյուծմանը և ծերացմանը: Այս բացասական երևույթների արգելակման վրա իր դրական դերը կունենա նաև գիտնականների կենսաթոշակին գիտական կոչումների համար հավելավճարի տրամադրումը, որը կոգնի նաև թոշակային տարիքի գիտնականների մի մասին փոխարինել երիտասարդ մասնագետներով:

Հաշվի առնելով ակադեմիայի 2010 թ. հաշվետու ժողովի որոշումները՝ պետք է արձանագրել, որ ՀՀ ԳԱԱ-ում շարունակում է չձևավորված մնալ գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացմանն օգնող մասնագիտացված կառույցը:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, ելնելով վերը շարադրվածից, որոշում է հավանություն տալ ՀՀ ԳԱԱ գործունեությանը:

Արդի ժամանակաշրջանում, երբ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը լրջորեն ձեռնամուխ է եղել գիտության ոլորտի բարեփոխումների և նորարարական գործունեության խթանման քաղաքականությանը, ընդհանուր ժողովը ՀՀ ԳԱԱ գործունեությունը առավել արդյունավետ դարձնելու նպատակով որոշում է առաջիկայում իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.Վերահանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը գիտական կազմակերպությունների հետ մշակելու համալիր ծրագիր՝ գերակա գիտական ուղղությունների շրջանակներում տարվող աշխատանքները ժամանակակից գիտատեխնոլոգիական սարքավորումներով ապահովելու համար:

2. Գիտական հետազոտությունների արդյունքների հիման վրա աշխատանքային ծրագրեր պատրաստելուն օգնելու նպատակով ՀՀ ԳԱԱ կառուցվածքում ստեղծել մասնագիտացված օղակ:

3.Պետական մակարդակով պայմաններ ստեղծել ասպիրանտական կրթությունը հաջողությամբ ավարտած երիտասարդ մասնագեներին գիտական կազմակերպությունների աշխատանքներում ներգրավելու համար:

4. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ բաժանմունքներին առավել խթանել ակադեմիական գիտական կազմակերպությունների արտասահմանյան, այդ թվում սփյուռքահայ անդամների համագործակցությանը:

ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի նախագահ,
ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյան

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս քարտուղար
ակադեմիկոս Ա. Շահինյան